Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 27.07.2022թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Հ. Ղազարյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Ռ. Քյոսայան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Համբարձումյան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Վ. Սիմոնյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության մասնագետ,

Բացակայում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Լ. Ասրիյան – ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի պետ,

Անդամ

Ի. Յազիչյան - ՖՆ «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի փորձագիտական և ապրանքագիտական բաժնի գլխավոր մասնագետ-հարգափորձ:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը ժամը 12:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 00219641, հասցե՝ ՀՀ, ք Երևան,Կոմիտասի պողոտա, 49/4, էլ հասցե՝ gnumner@metrology.am, հեռ.՝ +374 10 232600

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.2-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.1.5 կետում՝ «քաղաքացիություն» դաշտում նշված է տվյալ անձի ազգությունը քաղաքացիության փոխարեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գները ներկայացվում են ստորև՝

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)		
		«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Կշեռքների ստուգաչափում /նախահաշվային գին՝ 58 800 ՀՀ դրամ/	49 000	9 800	58 800

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

5. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հուլիսի 29-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Ղազարյան

_____ Ռ. Քյոսայան

_____ Հ. Համբարձումյան

Գնումները համակարգող՝ _____ Վ. Սիմոնյան